



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 3 (31)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2004 թվականի սեպտեմբերի 27-ից

Երեւան 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 89
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 91
ՕԳՏԱԿԱՐ ՍՈԴԵՆՆԵՐ	23, 105
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	25, 107
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ	27, 109
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	29, 111
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	37
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	39
ՑՈՒՑԻՉՆԵՐ	77
ՀԱՐՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	81
ԵՐԿՏԱՐ ԿՈԴԵՐԸ	112

ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	5
Տեղեկություններ 2002թ-ին գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին.	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1	
ИЗОБРЕТЕНИЯ	5, 89
Сведения о выданных патентах	7, 91
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	23, 105
Сведения о выданных патентах	25, 107
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	27, 109
Сведения о выданных патентах	29, 111
ТОВАРНЫЕ ЗНАКИ	37
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	39
УКАЗАТЕЛИ	77
СООБЩЕНИЯ	81
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	112

ЧАСТЬ 2	
ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	5
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 2002г.	7

CONTENTS

PART 1	
INVENTIONS	
Information on granted patents	
UTILITY MODELS	
Information on granted patents	
INDUSTRIAL DESIGNS	
Information on granted patents	
TRADE MARKS	
Information on registered trade marks and service marks	
INDEXES	
REPORTS	
TWO-LETTER CODES	

PART 2	
TRADE NAMES	
Information on registrated firm name's applications in 2002.	

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A01B 15/00 (11) 1484 (13) A2
(21) P20030139 (22) 10.11.2003
(42) 13.01.2004
(71) Արման Փեշտիմալյան (AM), Յովհաննես Փեշտիմալյան (AM)
(72) Արման Փեշտիմալյան (AM), Յովհաննես Փեշտիմալյան (AM)
(73) Արման Փեշտիմալյան, Երեւան, Ա. Տիգրանյան 5, բն.84 (AM), Յովհաննես Փեշտիմալյան, Երեւան, Ա.Տիգրանյան 5, բն.84 (AM)
(54) Հարթ վարի գութան
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես հողամշակման գործիքներին՝ գութաններին:

Հարթ վարի գութանն ունի շրջանակ, հիդրոգլանով կառավարվող քառօղակ մեխանիզմ, դարձկեն կանգնակ՝ դրան կոշտ միակցված երկկողմ դաշտային տախտակով, կանգնակին հողով միակցված խոփ, այն ճոճող լծակներ, կանգնակի մեջ համառանցք տեղակայված կցաշուրթով լիսեռ, այն պտտող կուլիսային մեխանիզմ, իրանի բանվորական մակերեսույթը կազմող շերտաձողեր եւ դրանց թիկունքում տեղակայված կոշտության կողեր, որոնք հողակապորեն միակցված են խոփին: Շերտաձողերը տեղափոխվում են լծակով (կամ լծակներով), որը հողակապորեն միակցված է վերին շերտաձողին եւ խոփը ճոճող լծակների երկարության միջակայքում դրանց վրա հողակապորեն միակցված նեցուկին: Լծակը (լծակները) ճոճող մատը, որը սահելով լծակի ճեղքի երկայնքով պտտում է այն, կոշտ ամրակցված է լիսեռի կցաշուրթին հողակապորեն միակցված նեցուկի վրա, որը շրջանցում է դարձկեն կանգնակը առջեւից:

Պարզեցվում է գութանի կառուցվածքը, նվազեցվում են կշիռը, էներգատարությունը եւ ինքնաթեքը, բարձրացվում է հուսալիությունը, 3 նկ.:

(51) 7 A01C 15/00 (11) 1485 (13) A2
(21) P20040025 (22) 20.02.2004
(42) 11.03.2004
(71) Հենրիկ Բարսեղյան (AM), Սարինե Բարսեղյան (AM)
(72) Հենրիկ Բարսեղյան (AM), Արմեն Մարգարյան (AM), Մարգարիտա Կիրակոսյան (AM), Սարինե Բարսեղյան (AM)
(73) Հենրիկ Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM), Սարինե Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM)
(54) Պարարտանյութացրիչ
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ պարարտանյութացրիչ մեքենաներին:

Պարարտանյութացրիչն ունի թափք, պարարտանյութի մատուցող փոխադրիչ, աշխատանքային ցրող օրգան, պարարտանյութի մատուցվող զանգվածի հավասարիչ, որն ունի թափքի երկայնական առանցքի ուղղությամբ, ուղղաձիգ դիրքով տեղակայված երկայնական եւ վերջամասում ճյուղավորվող ու դեպի թափքի կողերը նեղացվող վահաններ: Վահանները հորիզոնական ներքին կողով ուղղանկյուններ են եւ հանդերձված են եռանկյունաձեւ հողակապային սահմանափակիչներով: Թափքում հավասարիչի հենման հենավռանին կից տեղադրված է պարարտանյութի մատուցման նորմայի ցուցիչ:

Լայնացվում են պարարտանյութացրիչի ֆունկցիոնալ հնարավորությունները, ապահովվում է պարարտանյութի ցրման հավասարաչափությունը անհրաժեշտ շերտով ինչպես հարթ, այնպես էլ թեք տեղանքում, 4 նկ.:

(51) 7 A01G 17/08 (11) 1486 (13) A2
B65H 1/08
(21) P20030158 (22) 19.12.2003
(42) 11.03.2004

(71) Մանուկ Մանուկյան (AM)

(72) Մանուկ Մանուկյան (AM)

(73) Մանուկ Մանուկյան, Երեւան, Պարոնյան 6, բն. 13 (AM)

(54) Բույսի ճյուղերը հենալարերին կապող սարք եւ կապող տարր

(57) Գյուտերի խումբը վերաբերում է երկար ծողածեւ տարրերը, մասնավորապես՝ բույսերի ճյուղերը, հենալարերին կապելու պրոցեսը մեքենայացնող ձեռքի սարքերին:

Սարքն ունի բռնակով սնամեջ իրան, կապող տարրերի պահեստախցիկ եւ վերջինից կապող տարրերի արտաշարժի ելքային խոռոչ: Պահեստախցիկի կողային պատերի երկայնական կտրվածքների բացվածքում՝ նրա խոռոչում տեղադրված հենահարթակի եւ վերջինիս շարժումը սահմանափակող արգելապատի միջեւ տեղադրված է կապող տարրերի տրցակը: Բռնակի խոռոչում տեղադրված լծակը փոխազդում է հրիչի հետ, որի վրա ամրացված է երկաստիճան առջեւի ճակատով լեզվակը: Ելքային խոռոչի ստորին պատի վրա ամրացված են խոռոչի կողմից թեքություններ ունեցող ելուստներ:

Կապող տարրը ճկուն թերթանյութից պատրաստված եւ ծայրերում հենալարերի հետ սեւեռակման հանգույցներ ունեցող ժապավեն է, որի երկայնական կողմերից մեկն ունի տրցակի կալիչի սեւեռակման ելուստներ: Սեւեռակման հանգույցներն ունեն կտրվածքով միմյանց կապված եւ կտրվածքի խորության հետ փոքրացող առնվազն երկու փորվածք:

Հնարավորություն է ստեղծվում կապող տարրերը սեւեռակել տարբեր չափերի հենալարերի վրա եւ տարրերը օգտագործել տրցակի ձեւով, 2 անկախ կետ, 8 նկ.:

(51) 7 A61B 17/00 (11) 1487 (13) A2
(21) P20030153 (22) 16.12.2003
(42) 11.02.2004

(71) Էդուարդ Ավետիսյան (AM)

(72) Էդուարդ Ավետիսյան (AM)

(73) Էդուարդ Ավետիսյան, Երեւան, Արշակունյաց 135դ, բն. 13 (AM)

(54) Լեզվի կիսակաթվածի վիրահատական բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է վիրաբուժությանը, մասնավորապես՝ լեզվի կիսակաթվածի վիրահատական բուժման եղանակներին եւ կարող է կիրառվել դիմաձնոտային վիրաբուժության մեջ տարբեր պատճառներից առաջացած կիսակաթվածների բուժման համար:

Գյուտի էությունն այն է, որ լեզվի կաթվածահար մկանների մկանանյարդավերականգնումը կատարում են՝ օգտագործելով դոնորական մկանային լաթ եւ ախտահարված կեսի վրա ձեւավորելով ենթալորձաթաղանթային թունել: Համաձայն գյուտի, դոնորական մկանային լաթը ներբերանային եղանակով տարանջատված լեզվի առողջ կեսի կզկալեզվային մկանն է, որը տեղադրում եւ սեւերակում են կաթվածահար մկանի արտաքին մակերեսին ձեւավորված ենթալորձաթաղանթային թունելում եւ միաժամանակ ծածկում ինչպես կաթվածահար մկանը, այնպես էլ լեզվի շարժիչ նյարդավորումն ապահովող ենթալեզվային նյարդի ցողունն ու ճյուղերը:

Ապահովվում է բուժման եղանակի պարզեցումը եւ արդյունավետության բարձրացումը:

(51) 7 A61B 17/58 (11) 1488 (13) A2
(21) P20030123 (22) 17.10.2003
(42) 11.02.2004

(71) Կարապետ Մերաբյան (AM), Ալբերտ Ջարացյան (AM), Սլավիկ Բաղդասարյան (AM)

(72) Կարապետ Մերաբյան (AM), Ալբերտ Ջարացյան (AM), Սլավիկ Բաղդասարյան (AM)

(73) Կարապետ Մերաբյան, Երեւան, Ջեյթուն, ուս. ավան, 4-րդ մասնաշ., սենյակ 99 (AM), Ալբերտ Ջարացյան, Երեւան, Կոմիտասի 44, բն. 45 (AM), Սլավիկ Բաղդասարյան, Երեւան, Դավթաշեն, 1-ին թաղամաս 19, բն. 30 (AM)

(54) Նախաբազկի ոսկրերի կոտրվածքների բուժման արտաքին սեւեռակման ապարատ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային եւ կարող է կիրառվել վնասվածքաբանությունում

եւ ոսկրաբուժությունում՝ նախաբազկի ոսկրերի կոտրվածքների բուժման համար:

Ապարատն ունի հենարանային տարր, միջոսկրային ձողերի համար նախատեսված անցքերով մոտակա եւ հեռադիր ծողաբռնիչներ: Հենարանային տարրը պտուտակագույգից կազմված կոմպրեսիոն-դիստրակցիոն հանգույց է, որի պտուտակն ունի երկկողմանի տարաուղղորդված պարուրակ եւ կենտրոնական գլխիկ: Մանեկներն ունեն գնդաձեւ ծայրեր, որոնք փոխազդում են համապատասխան ծողաբռնիչին միակցված գնդաձեւ փորակ ունեցող տարրի հետ՝ առաջացնելով հողակապ յուրաքանչյուր ծողաբռնիչի համար:

Ապահովվում է ոսկրաբեկորների սեւեռական կայունությունը, ոսկրային հատվածների կանգի շտկումը՝ համադրումից եւ սեւեռակումից հետո, բացառվում է լրացուցիչ տարրերի տեղադրման անհրաժեշտությունը, 3 նկ.:

(51) 7 A61C 1/00 (11) 1489 (13) A2
(21) P20030132 (22) 28.10.2003
(42) 13.01.2004
(71) Հայկ Ենոքյան (AM)
(72) Հայկ Ենոքյան (AM)
(73) Հայկ Ենոքյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Գալշոյան 12, բն. 1ա (AM)
(54) Քունք-ստործնոտային հողի հիվանդությունների ախտորոշման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է դիմածնոտային վիրաբուժությանը, մասնավորապես՝ քունք-ստործնոտային հողի հիվանդությունների ախտորոշման եղանակներին:

Հիվանդին հետազոտում են, գրանցում հիվանդությանը բնորոշ հիմնական զանգատները, գնահատում այդ զանգատները համապատասխան թվային արժեքներով: Հետազոտվողին նաեւ օբյեկտիվորեն զննում են եւ զննման արդյունքները նույնպես գնահատում համապատասխան թվային արժեքներով: Ապա կատարում են ստացված թվային արժեքների գումարում: Եթե ընդհանուր գումարը 10 միավորից ցածր է, ապա հիվանդության հա-

վանականությունը նվազագույն է եւ հողի ախտահարումը բացառվում է: Եթե ընդհանուր գումարը 10-ից մինչեւ 15 միավոր է, ապա հիվանդության հավանականությունը մեծանում է, ախտորոշվում է հողի ախտահարումը եւ հետազոտվողին խորհուրդ է տրվում անցնել ավելի նեղ մասնագիտական զննում ռենտգենաբանական հետազոտության միջոցով: Իսկ եթե ընդհանուր գումարը 15 միավորից բարձր է, ապա հողը համարվում է ախտահարված հիվանդությամբ:

Բարձրանում է քունք-ստործնոտային հողի հիվանդության ախտորոշման ճշգրտությունը, 1 նկ.:

(51) 7 A61C 8/00 (11) 1490 (13) A2
(21) P20030130 (22) 28.10.2003
(42) 13.01.2004
(71) Յուրի Պողոսյան (AM), Աշոտ Հարությունյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Աշոտ Հարությունյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 17 (AM), Աշոտ Հարությունյան, Երեւան, Օգանովի 5, բն. 21 (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Գայդարի 18, բն. 41 (AM)
(54) Ներոսկրային ատամնային իմպլանտացիայի եղանակ
(57) Գյուտը վերաբերում է դիմածնոտային վիրաբուժությանը, մասնավորապես՝ ներոսկրային ատամնային իմպլանտացիայի եղանակներին:

Բացակայող ատամների շրջանում՝ ատամնաբնային ելունի կատարով հատում են լորձաթաղանթը վերոսկրի հետ միասին: Ծնոտի ոսկրը մերկացնում են եւ իմպլանտատի համար շաղափում օթյակ, որի մեջ մուրճի թեթեւակի հարվածներով ներդնում են թիթեղային իմպլանտատը: Ատամնաբնային ելունի ատորֆիայից առաջացած ոսկրային պակասը լրացնում են մանրացրած կեղեւային ոսկրային մատրիքսով, իսկ իմպլանտատը եւ մանրացրած մատրիքսը ծածկում են կիսախողովակաձեւ եւ կեղեւային ոսկրային մատրիքսի թիթեղով, բաց թողնելով իմպլանտատի գլխիկը:

Ապահովվում է եղանակի արդյունավետությունը:

(51) 7 A61C 8/00 (11) 1491 (13) A2
(21) P20030127 (22) 28.10.2003
(42) 13.01.2004

(71) Յուրի Պողոսյան (AM), Աշոտ Հարությունյան (AM), Հայկ Ենոքյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Աշոտ Հարությունյան (AM), Հայկ Ենոքյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 17 (AM), Աշոտ Հարությունյան, Երեւան, Օգանովի 5, բն. 21 (AM), Հայկ Ենոքյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Գալշոյան 12, բն. 1ա (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Գայդարի 18, բն. 41 (AM)

(54) Ենթավերոսկրային ատամնային իմպլանտացիայի եղանակ

(57) Գյուտը վերաբերում է դիմածնոտային վիրաբուժությանը, մասնավորապես՝ ենթավերոսկրային ատամնային իմպլանտացիայի եղանակներին:

Կատարում են գծային կտրվածք վերին կամ ստորին ծնոտի ատամնաբնային ելունի կատարով դրա ամբողջ երկարությամբ, ինչպես նաև՝ ուղղահայաց կտրվածքներ մինչև բերանի նախադռան կամարը (անցման ծալք), միաժամանակ հատելով լորձաթաղանթը եւ վերոսկրը, ապա շերտազատում լորձաթաղանթը վերոսկրի հետ միասին, դրանով իսկ մերկացնելով ծնոտի ատամնաբնային ելունը եւ մարմնի մի հատվածը: Ֆիսուր բորով ատամնաբնային ելունի շրջանում կատարում են ներքնափոսեր իմպլանտատի երկթիր բաղադրամասերի համար, ստանում դրոշմ մերկացրած ոսկրային մակերեսից եւ պատրաստված մոդելի վրա որոշում իմպլանտատի կառուցվածքը: Ապա պատրաստված իմպլանտատը տեղադրում են ծնոտի վրա, վերքը կարում են, իսկ պրոտեզավորումը կատարում են 1,5-2 ամիս անց: Իմպլանտատի սեւեռման հուսալիությունը բարձրացնելու նպատակով, իմպլանտատը մինչև հենակետային գլխիկների վզիկները ծածկում են մանրացրած ոսկրային

մատրիքով (ալոգենային կամ քսենոգենային), լորձաթաղանթավերոսկրային լաթը ավելի շարժուն դարձնելու նպատակով՝ բերանի նախադռան կողմից հիմքում հորիզոնական կտրվածքով հատում են վերոսկրը:

Ապահովվում է եղանակի արդյունավետությունը՝ կանխելով ծնոտի ատամնաբնային ելունի հետագա ատրոֆիան եւ բարձրացնելով իմպլանտատի սեւեռման հուսալիությունը:

(51) 7 A61C 8/00 (11) 1492 (13) A2
(21) P20030129 (22) 28.10.2003
(42) 13.01.2004

(71) Յուրի Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM), Աշոտ Հարությունյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Դավիթ Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM), Աշոտ Հարությունյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 17 (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Գայդարի 18, բն. 41 (AM), Հայկ Ենոքյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Գալշոյան 12, բն. 1ա (AM), Աշոտ Հարությունյան, Երեւան, Օգանովի 5, բն. 21 (AM)

(54) Սինուսիթիցի եղանակ

(57) Գյուտը վերաբերում է դիմածնոտային վիրաբուժությանը, մասնավորապես՝ վերին ծնոտի ատամնային իմպլանտացիայի եղանակներին:

Ներբերանային կտրվածքով մերկացնում են վերին ծնոտային ծոցի առաջային պատը, վերջինից՝ չվնասելով ծոցի լորձաթաղանթը, ուղղահայաց 1x1,5սմ չափով հատում ուղանկյունաձեւ ոսկրային հատված, որի ստորին եզրը լորձաթաղանթի հետ միասին, հատուկ ռասպատորի միջոցով, հրում են դեպի ներս եւ վեր՝ ստանալով խռոչ: Ստացած խռոչը լցնում են մորածին խոճկորի մանրացրած ապահանքայնացված ոսկրով մինչև ծոցի առաջային պատը:

Ապահովվում է եղանակի արդյունավետությունը, օգտագործելով մորածին խոճկորի մանրացրած ապահանքայնացված ոսկրայութը:

(51) 7 A61C 8/00 (11) 1493 (13) A2
(21) P20030131 (22) 28.10.2003
(42) 13.01.2004
(71) Յուրի Պողոսյան (AM), Աշոտ Հարությունյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Աշոտ Հարությունյան (AM), Դավիթ Պողոսյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 17 (AM), Աշոտ Հարությունյան, Երեւան, Օգանովի 5, բն. 21 (AM), Դավիթ Պողոսյան, Երեւան, Գալստի 18, բն. 41 (AM)
(54) Ներուկային ատամնային իմպլանտացիայի եղանակ
(57) Գյուտը վերաբերում է դիմաճնոտային վիրաբուժությանը, մասնավորապես՝ ներուկային ատամնային իմպլանտացիայի եղանակներին: Ատամնաբնային ելունի կատարով հատում են լորձաթաղանթը եւ մերկացնում ծնոտի ոսկրը: Ապա շաղափում են օթյակ, որի մեջ մուրճի թեթեւակի հարվածներով մտցնում են իմպլանտատը: Կատարի ներքին կամ արտաքին կողմից ֆիսուր բորով հատում եւ հեռացնում են իմպլանտատի երկարությանը համապատասխան ոսկրային հատված, որի հիմքի լայնությունը 1,0-1,5մմ է, իսկ առաջացած արատը՝ իմպլանտատը տեղադրելուց հետո, լրացնում են մանրացրած ոսկրային մատրիքսով, որն իմպլանտատի հետ միասին ամբողջությամբ ծածկում են թիթեղային ոսկրային մարտիքսով:

Ապահովվում է եղանակի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) 7 A61K 31/198 (11) 1494 (13) A2
(21) P20040020 (22) 05.02.2004
(42) 12.04.2004
(71) Նունե Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան (AM), Կոնստանտին Ղարաբյոզյան (AM), Յուրի Թունյան (AM), Միքայել Թունյան (AM), Վլադիմիր Բոյաջյան (AM)
(72) Նունե Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան (AM), Կոնստանտին Ղարաբյոզյան (AM), Յուրի Թունյան (AM), Միքայել Թունյան (AM), Վլադիմիր Բոյաջյան (AM)

(73) Նունե Աբրահամյան, Երեւան, Ա. Խաչատրյան 12, բն. 63 (AM), Արթուր Պապիկյան, Երեւան, Հր. Քոչարի 24, բն. 29 (AM), Կոնստանտին Ղարաբյոզյան, Երեւան, Կիւկյան 6, բն. 6 (AM), Յուրի Թունյան, Երեւան, Արմյան 48, բն. 20 (AM), Միքայել Թունյան, Երեւան, Մուղովական 90, բն. 9 (AM), Վլադիմիր Բոյաջյան, Երեւան, Ե. Քոչարի 13, բն. 103 (AM)

(54) Թաղանթակայունացնող ակտիվություն ունեցող «Արգինին-Լիկվո» պատրաստուկի կիրառումը պարօդոնտի հիվանդությունների բուժման համար

(57) Հայտնի է մեմբրանակայունացնող ակտիվություն ունեցող «Արգինին-Լիկվո» պատրաստուկի կիրառումը որպես հեպատոպրոտեկտոր եւ թունազերծող միջոց:

Հայտարկվում է հայտնի պատրաստուկի կիրառումը նոր նշանակությամբ՝ պարօդոնտի հիվանդությունների բուժման համար:

(51) 7 A61K 35/32 (11) 1495 (13) A2
(21) P20030128 (22) 28.10.2003
(42) 13.01.2004
(71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM)
(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Հայկ Ենոքյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 17 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 17 (AM), Հայկ Ենոքյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Գալշոյան 12, բն. 1ա (AM)

(54) Ոսկրաստեղծման խթանիչ

(57) Գյուտը վերաբերում է դիմաճնոտային շրջանի վերականգնողական վիրաբուժությանը եւ կարող է կիրառվել ոսկրային տրանսպլանտատների ստացման համար:

Առաջարկվում է որպես կենսաբանական հումք օգտագործել նորածին խոճկորների խողովակավոր ոսկրերը, թիակները, գանգի տափակ ոսկրերը, ողնաշարն կամ կոնքոսկրը:

(51) 7 A61L 2/18 (11) 1496 (13) A2
D21H 25/18
(21) P20030136 (22) 03.11.2003
(42) 13.01.2004
(71) Արմեն Սահակյան (AM), Գայանե Էլիագյան (AM)
(72) Արմեն Սահակյան (AM), Գայանե Էլիագյան (AM)
(73) Արմեն Սահակյան, Երեւան, Հ. Հովհաննիսյան
119, բն. 27 (AM), Գայանե Էլիագյան, Երեւան,
Ղազար Փարպեցու 11, բն. 3 (AM)
(54) Գրադարանային ֆոնդերն ախտահանող
բաղադրանյութ
(57) Առաջարկվում է գրադարանային ֆոնդերն
ախտահանող բաղադրանյութ, որը ներառում է
Կոչիի ուրցի՝ 10-30 զանգ. %, արծաթատերեւի
տարկավանի՝ 10-30 զանգ. %, նեղատերեւ
հազարատերեւուկի՝ 10-30 զանգ. %, օշինդր
երեւանյանի (*Artemisia fragrans* Willd. syn.
Artemisia erevanica Bess.)՝ 10-30 զանգ. % եւ
բլդրդան Սոսնովսկու (*Heracleum Sosnowskyi*
Manden)՝ 10-30 զանգ. % թորվածքներ;
Ընդլայնվում է գրադարանային ֆոնդերն
ախտահանող բաղադրանյութերի տեսականին:

(51) 7 A61N 5/067 (11) 1497 (13) A2
(21) P20040021 (22) 05.02.2004
(42) 12.04.2004
(71) Նունե Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան
(AM), Վլադիմիր Բոյաջյան (AM), Միքայել Թունյան
(AM), Հասմիկ Թունյան (AM)
(72) Նունե Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան
(AM), Վլադիմիր Բոյաջյան (AM), Միքայել Թունյան
(AM), Հասմիկ Թունյան (AM)
(73) Նունե Աբրահամյան, Երեւան, Ա. Խաչատրյան
12, բն. 63 (AM), Արթուր Պապիկյան, Երեւան, Հր.
Քոչարի 24, բն. 29 (AM), Վլադիմիր Բոյաջյան,
Երեւան, Ե. Քոչարի 13, բն. 103 (AM), Միքայել
Թունյան, Երեւան, Մոլդովական 90, բն. 9 (AM),
Հասմիկ Թունյան, Երեւան, Աբովյան 48, բն. 20
(AM)
(54) Պարօդոնտի հիվանդությունների բուժման
եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մաս-
նավորապես՝ պարօդոնտի բուժման եղանակ-
ներին:

Համաձայն հայտարկվող եղանակի ատամի
մակերեսային ինֆեկցիաներն են ատամնա-
նստվածքը եւ միաժամանակ ենթարկում են
լազերային ճառագայթմանը հյուսվածքների
դժվարամատչելի հատվածներում, ընդ որում
լազերի հզորությունը 2,5 վատտ է, իմպուլսների
հաջորդման հաճախականությունը 0,05 Հերց,
իմպուլսների տևողությունը 0,1 վայրկյան:
Կատարում են լնդագրպանիկների ներսային մա-
կերեսի ապաէպիթելիացումը եւ պատրաստուկի
ներմուծումը դեպի լնդագրպանիկները:

Ապահովվում է եղանակի պարզեցումը
եւ բուժման ժամկետների տևողության կրճա-
տումը:

(51) 7 B02B 3/00 (11) 1498 (13) A2
(21) P20030105 (22) 17.09.2003
(42) 11.11.2003
(71) Լիպարիտ Սահակյան (AM), Սամվել Սահակ-
յան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Վահան
Մելիքյան (AM)
(72) Լիպարիտ Սահակյան (AM), Սամվել Սահակ-
յան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Վահան
Մելիքյան (AM)
(73) Լիպարիտ Սահակյան, Երեւան, Բաշինջաղյան
176, բն. 17 (AM), Սամվել Սահակյան, Երեւան,
Նանսենի 3, բն. 31 (AM), Շավարշ Գրիգորյան,
Երեւան, Ա. Տիգրանյան 5, բն. 73 (AM), Վահան
Մելիքյան, Երեւան, Ա. Խաչատրյան 10, բն. 3 (AM)
(54) Չավարացու մշակաբույսի հատիկների
թեփահանիչ
(57) Գուտը վերաբերում է գյուղատնտեսական
մեքենաշինությանը, մասնավորապես՝ հաճարի
եւ ցորենի թեփահանիչներին:

Թեփահանիչն որի շարժառարկող լիսեռի վրա
տեղակայված, հատած կոնի տեսք ունեցող ռոտոր
եւ կալսաթակի դեր կատարող անշարժ պատյան:
Ռոտորը սնամեջ է, դրա ներսում համառանցքորեն
բացակով տեղակայված է հատած կոնի տեսք
ունեցող անշարժ հենարանային միջուկ: Պատյանի

ներքին եւ ռոտորի արտաքին մակերեսները սահմանափակում են թեփահանիչի առաջին, իսկ ռոտորի ներքին եւ հենարանային միջուկի արտաքին մակերեսները՝ երկրորդ աշխատանքային խուցը: Բոլոր աշխատանքային մակերեսները ռետինապատ են:

Բարձրացվում է թեփահանիչի արտադրողականությունը, 1 նկ.:

(51) 7 B02B 3/02 (11) 1499 (13) A2
(21) P20030141 (22) 20.11.2003
(42) 13.01.2004
(71) "Հայկական գյուղատնտեսական ակադեմիա" պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Արշալույս Թարվերդյան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Սամվել Հովհաննիսյան (AM)
(73) "Հայկական գյուղատնտեսական ակադեմիա" պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 74 (AM)
(54) Հատիկի թեփահանման եւ հղկման մեքենա
(57) Գյուտը վերաբերում է ձավարեղենի արտադրության տեխնոլոգիական սարքավորումներին, մասնավորապես՝ ցորենի եւ գարու հատիկների թեփահանման եւ հղկման մեքենաներին: Հատիկի թեփահանման եւ հղկման մեքենան ունի իրան, բեռնման հարմարանք, իրանի ներսում տեղակայված գլանաձեւ մաղ, որի ներսում համառանցք տեղակայված է սնամեջ լիսեռ իր վրա ամրակցված հղկաքարերով, հատիկի բեռնաթափման կարճախողովակ ելքի կարգավորման փականով, թեփի հեռացման կարճախողովակ: Համաձայն գյուտի սնամեջ լիսեռի վրա, հղկաքարերի միջեւ, տեղադրված են թելանիվներ, որոնց կունդերն ունեն շառավղային անցքեր, որոնք համընկնում են սնամեջ լիսեռի շառավղային անցքերի հետ:
Պարզեցվում է թեփահանման եւ հղկման մեքենայի կառուցվածքը, նվազեցվում է մետաղա եւ էներգատարությունը, փոքրանում են եզրաչափերը, 3 նկ.:

(51) 7 B02C 13/04 (11) 1500 (13) A2
(21) P20040010 (22) 23.01.2004
(42) 11.03.2004
(71) "Հայկական գյուղատնտեսական ակադեմիա" պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Արշալույս Թարվերդյան (AM), Արմեն Մարգարյան (AM), Գեորգ Դանիելյան (AM), Արամ Մազմանյան (AM)
(73) "Հայկական գյուղատնտեսական ակադեմիա" պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 74 (AM)
(54) Մանրիչ
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ կերերի մանրիչներին:
Մանրիչն ունի իրան, իրանի վրա տեղակայված մանրացվող նյութի մատուցման բունկեր իր կարգավորիչով, իրանում տեղակայված գլանաձեւ մաղ, որի գլանաձեւ մակերեսների վրա բացված է մանրացված զանգվածի ելքը կարգավորող պատուհան եւ շախմատաձեւ դասավորված են հակակտրիչներ: Մանրիչն ունի նաեւ մանրացված նյութի հավաքման բունկեր, էլեկտրաշարժիչ եւ էլեկտրաշարժիչի լիսեռի վրա ամրակցված մուրճիկային ռոտոր:
Բարձրացվում է մանրիչի արտադրողականությանը, իջեցվում է էներգատարությունն ու մետաղատարությունը, 2 նկ.:

(51) 7 B02C 23/08 (11) 1501 (13) A2
B02C 23/24
(21) P20030146 (22) 03.12.2003
(42) 11.02.2004
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Ալբերտ Պողոսյան (AM), Շան Բահադուր (US), Վիկտոր Մակարյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Հանքանյութերի փոշիների նանոչափային ֆրակցիաների ստացման սարք

(57) Սարքն ունի հավաքովի գլանակոնական խողովակի տեսքով, թասածել սնամեջ պարզարաններով իրան, որի ստորին մասում տեղակայված են օդի մատուցման ծայրափողակներ, օդային հոսքի հավասարաբաշխման զտիչներ եւ մաղ: Իրանի վերին մասում տեղակայված է մասնիկների հոսքի գրանցման տվիչ: Իրանի կոնական մակերեսային արտաքին կողմերում տեղակայված են լիցքավորման տարաբեւեռ էլեկտրոդներ, որոնցով ապահովվում են էլեկտրական դաշտի պոտենցիալի նվազումն ըստ խողովակի բարձրության:

Ապահովվում է հանքանյութերի փոշիներից նանոչափային ֆրակցիաների ստացման արտադրողականության բարձրացում եւ շեղջաքառացման նվազեցում, 2 նկ.:

(51) 7 B21D 22/26 (11) 1502 (13) A2
(21) P20040011 (22) 26.01.2004
(42) 12.04.2004
(71) Էռնեստ Նազարյան (AM)
(72) Էռնեստ Նազարյան (AM), Միլետա Առաքելյան (AM)
(73) Էռնեստ Նազարյան, Երեւան, Նոր Նորքի 5-րդ միկր. տ. 44, բն. 23 (AM)

(54) Միաբյուրեղների աճեցման արկղի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է թերթային մոլիբդենից նավակաձել արկղի պատրաստման եղանակներին եւ կարող է կիրառվել հորիզոնական ուղղված բյուրեղացման համար:

Միաբյուրեղների աճեցման արկղի պատրաստման եղանակ, համաձայն որի թերթային մոլիբդենից պատրաստում են ձեւավոր նախապատրաստվածք: Նախապատրաստվածքը դրոշմում տեղադրելուց հետո, նրա պարագծով ստեղծում են ջերմային դաշտ, միաժամանակ կիրառում են արկղի հատակի ուրվագծով սեղմող լարումներ, ապա նախապատրաստվածքը դեֆորմացնում են, տալով գազաթուն նեղացված նավակի ձեւ:

Բարձրացվում է միաբյուրեղների պիտանի ելքը, պակասեցվում է թերթային մոլիբդենի եւ խայծային բյուրեղի ծախսը, 2 նկ.:

(51) 7 B60C 11/16 (11) 1503 (13) A2
(21) P20030126 (22) 24.10.2003
(42) 13.01.2004
(71) Մանուկ Մարգարյան (AM)
(72) Մանուկ Մարգարյան (AM)
(73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վահր. Փափազյան փող. 2-րդ նրբ. 133 (AM)
(54) խցավոր դող

(57) Գյուտը վերաբերում է ավտոմեքենաշինությանը, մասնավորապես՝ ընթացքի ժամանակ փչվելու հնարավորություն ունեցող ավտոմեքենաների անիվների խցավոր դողերին:

Խցավոր դողն ունի երկու մասից բաղկացած օդախցիկ եւ դողածածկան: Օդախցիկի մասերը իրարից բաժանված են ռետինե թաղանթով, որի վրա ամրացված են մետաղյա բութակներ: Դողածածկանի մեջ տեղադրված են մետաղյա օղեր, որոնց մեջ գտնվում են բութակների սուր ծայրերը:

Կանխվում է սահունը սառցակալված ճանապարհների վրա, 4 նկ.:

(51) 7 B64D 29/06 (11) 1504 (13) A2
F16M 13/00
(21) P20030156 (22) 18.12.2003
(42) 11.03.2004
(71) “Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն” ՊՈԱԿ (AM), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
(72) Արման Շահագիզյան (AM), Հրաչյա Շահագիզյան (AM)
(73) “Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն” ՊՈԱԿ, Երեւան, Սեւանի փող. 114 (AM), “Հայաստանի պետական ճար-

տարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(54) Թռչող ապարատի մոդելի մոտոշրջանակի եւ մոտոգոնդոլի միակցման հանգույց

(57) Գյուտը վերաբերում է թռչող ապարատի մոդելի մոտոշրջանակի եւ մոտոգոնդոլի միակցման հանգույցի կառուցվածքին եւ կարող է օգտագործվել ավիաշինության, մեքենաշինության եւ նավաշինության մեջ:

Թռչող ապարատի մոդելի մոտոշրջանակի եւ մոտոգոնդոլի միակցման հանգույցը կազմված է մոտոշրջանակի հետեւի մասում գտնվող ելուստից, այդ ելուստին համապատասխանող փորվածքից, որը գտնվում է մոտոգոնդոլի առջեւի մասում եւ դրանց մակերեսայինների արանքում տեղակայված ռետինե գոտուց, ընդ որում այդ մակերեսայիններն ունեն սինուսոիդալ պրոֆիլ:

Բարձրացվում է ամրացման թրթռամեկուսացումը, փոքրացվում են եզրաչափերը, 1 նկ.:

(51) 7 C01B 33/18 (11) 1505 (13) A2
B01D 15/08

(21) P20030110 (22) 24.09.2003
(42) 11.12.2003

(71) ՀՀ «Երեւանի «Քիմտեխ» Քիմիատեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (AM)

(72) Սերգեյ Հայրապետյան (AM), Համլետ Բալայան (AM), Սերգեյ Ավթանդիլյան (AM), Ռուզան Հովսեփյան (AM), Լեոնտի Տկաչենկո (AM), Մարգարիտա Ավետիսյան (AM), Արման Թորգոմյան (AM)

(73) ՀՀ «Երեւանի «Քիմտեխ» Քիմիատեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, Երեւան, Արցախի 10ա (AM)

(54) Պոլիմերային թաղանթով պատված սիլիկա-ժելային սորբենտի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական սորբենտների ստացման եղանակին եւ կարող է կիրառվել քրոմատագրության մեջ:

Սիլիկաժելի մասնիկների մակերեսայինը պատում են երկշերտ պոլիմերային թաղանթով:

Առաջին շերտը, որը կազմում է սորբենտի ընդհանուր զանգվածի 5-8%՝ գլուտարալդեհիդով կարված պոլիվինիլային սպիրտ է, իսկ երկրորդը՝ բիս-ակրիլամիդով կարված պոլիակրիլամիդային ժել եւ կազմում է սորբենտի ընդհանուր զանգվածի՝ 5-18%:

Պարզեցվում է եղանակը եւ բարձրանում պոլիմերային թաղանթի հարակցումը, բարելավվում են սորբենտի կառուցվածքային բնութագրերը:

(51) 7 C01B 33/40 (11) 1506 (13) A2
C09C 1/42

(21) P20030150 (22) 09.12.2003
(42) 11.02.2004

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ալբերտ Պողոսյան (AM), Արմեն Համբարձումյան (AM), Տիգրան Մարտիրոսյան (AM), Վիկտոր Մակարյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Օրգանաբենտոնիտի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է նավթաքիմիական արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել լցանյութերի եւ քսուքների արտադրության մեջ: Բենտոնիտի հատիկները խառնում են չորրորդային ամոնիումային աղի լուծույթի հետ 50-70 րոպեի ընթացքում սորուն նյութերի խառնիչում եւ միաժամանակ խառնուրդին հաղորդում են 18-22 կՅց հաճախությամբ անդրաձայնային տատանումներ: Բարձրանում է եղանակի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) 7 C07C 233/14 (11) 1507 (13) A2
(21) P20030108 (22) 18.09.2003

(42) 13.01.2004

(31) 10243666.5 (32) 20.09.2002 (33) DE

(71) Բայեր Ակտիենգեզելշաֆտ(DE)
 (72) Դիրկ Ախտեն (DE), Միշաել Կլիմպել (DE),
 Էմիլ Բարրիո (DE), Լոթար Ռայֆ (DE), Ռենկե
 Սոտովայլեր (DE), Յայնրիխ Բերգ (DE), Տչոլտ
 Շենտիվանիյ (DE), Շտեֆան Գլանդեր (CA)
 (73) Բայեր Ակտիենգեզելշաֆտ (DE)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) Երկթիոկարբամինային թթվի եթերներ,
 դրանց ստացման եղանակ, կիրառում, պոլիմերի
 ստացման եղանակ եւ պոլիմեր
 (57) Երկթիոկարբամինային թթվի եթերները
 ստանում են երկթիոկարբամատի աղի փոխազ-
 դեցությամբ հալոգենօրգանական միացության
 հետ:

Երկթիոկարբամինային թթվի եթերները
 կիրառում են մոնոմերի պոլիմերացման աստի-
 ճանի կարգավորման համար:

Պոլիմերը ստանում են քլորապրենի
 կամ 2,3-երկքլորբուտադիենի ջրաէմուլսային
 պոլիմերացմամբ ռադիկալային ակտիվարարի
 առկայությամբ: Ապահովվում է եթերի ստացման
 եղանակի էմոնոմերի պոլիմերացման աստիճանի
 կարգավորման արդյունավետությունը, 5 անկախ
 կետ:

(51) 7 C07K 5/023 (11) 1508 (13) B2
 A61K 38/04
 A61K 31/47
 A61K 38/03
 C07D 401/12

(21) P20000097 (22) 19.03.1999
 (65) 1047A2
 (85) 19.10.2000

(86) PCT/US99/05919, 19.03.1999
 (87) WO 99/47545 23.09.99
 (31) 60/078, 770 (32) 19.03.1998 (33) US
 (71) Վերթեքս Ֆարմասյուրփելզ, Ինք. (US)
 (72) Մարիոն Ուոնամեյքեր (US), Գայ Բենիս (US),
 Պոլ Չարիֆսոն (US), Դեվիդ Լոուֆեր (US), Մայքլ
 Մալիքան (US), Մարկ Մուրքո (US), Քեյթ Ուիլսոն
 (US), Ջեյմս Ջանետկա (US), Ռոբերտ Դեվիս (US),
 Ան-Լուր Գրիլո (US), Յան Շի (US), Կորնելիա
 Ֆորսթեր (US)

(73) Վերթեքս Ֆարմասյուրփելզ, Ինք. (US)

(74) Յ. Մանուկյան

(54) Կասպազների արգելակիչներ

(57) Գյուտը վերաբերում է կասպազների ակտի-
 վությունը արգելակող միացությունների նոր
 դասին, մասնավորապես՝ ինտերլեյկին-1-բետա
 փոխակերպման ֆերմենտների ակտիվությունը
 արգելակող միացություններին:

Գյուտը վերաբերում է նաեւ դեղագործական
 բաղադրանյութերին, որոնք ներառում են այդ-
 պիսի միացություններ: Միացությունները եւ
 դեղագործական բաղադրանյութերը, արգելա-
 կելով կասպազների ակտիվությունը, կարող են
 կիրառվել ինտերլեյկին-1-ով, ապոպտոզիսով,
 ինտերֆերոն-գամա-խթանող գործոնով կամ ին-
 տերֆերոն-գամա-ով միջնորդավորված հիվանդու-
 թյունների բուժման համար, ներառյալ՝ բորբոքային
 ու ինքնախնամային հիվանդությունները, ոսկրի
 քայքայիչ եւ պրոլիֆերատիվ խանգարումները,
 վարակային հիվանդությունները ու դեգեներատիվ
 հիվանդությունները:

Գյուտը վերաբերում է նաեւ կասպազների
 ակտիվության արգելակման եւ ինտերֆերոն-
 գամա-խթանող գործոնի ու ինտերֆերոն-գամա-
 ի արտադրության նվազեցման եղանակներին:
 Սույն գյուտը վերաբերում է նաեւ կասպազների
 արգելակիչների ստացման եղանակներին: 8
 անկախ կետ:

(51) 7 C07K 7/06 (11) 1509 (13) A2
 A61K 38/08
 A61P 25/28

(21) P20030161 (22) 29.12.2003
 (42) 11.03.2004

(71) Արմեն Գալոյան (AM), Սամվել Չախլյան (AM),
 Նաիրա Գալոյան (RU)
 (72) Արմեն Գալոյան (AM), Սամվել Չախլյան (AM),
 Նաիրա Գալոյան (RU)
 (73) Արմեն Գալոյան, Երեւան, Եզնիկ Կողբացու
 2ա, բն. 66 (AM), Սամվել Չախլյան, Երեւան,
 Աղբյուր Սերոբի 3, բն. 64 (AM), Նաիրա Գալոյան,
 Մոսկվա, Լենինսկի պր. 123/1, բն. 405 (RU)

(54) Հիպոթալամիկ պեպտիդ, որն ունի ամիլոիդային պեպտիդի հետ կապվելու ունակություն
(57) Գյուտը վերաբերում է պեպտիդներ պարունակող դեղագործական պատրաստուկներին եւ կարող է կիրառվել նեյրոդեգեներատիվ հիվանդությունների, մասնավորապես՝ Ալցհեյմերի հիվանդության, բուժման համար դեղորայքների արտադրության մեջ:

Հայտարկվում է Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro բանաձեւի նոր պեպտիդ, որը ստանում են ֆերմենտային պրոտեոլիզի միջոցով հիպոթալամուսի սպիտակուցապեպտիդային բաժնենմասից անջատված Ala-Gly-Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-Gly-Val-Tyr ամինաթթվային հաջորդականություն ունեցող պեպտիդից: Նոր նոնապեպտիդն ունի ամիլոիդային պեպտիդի կապակցման սայտի հետ կապվելու ունակություն, որի արդյունքում 90%-ով նվազեցվում է այդ պեպտիդի նեյրոտոքսիկ հատկությունները:

(51) 7 C08F 20/06 (11) 1510 (13) A2
(21) P20030147 (22) 08.12.2003
(42) 11.02.2004
(71) Մեժլում Երիցյան (AM)
(72) Լիլիթ Մելքոնյան (AM), Ռայա Քարամյան (AM)
(73) Մեժլում Երիցյան, Երեւան, Թոթովենցի 6/1, բն. 17 (AM)
(54) Ջրակլանող համապոլիմերի ստացման եղանակ եւ ջրակլանող համապոլիմեր պարունակող բաղադրանյութ
(57) Մոնոմերները՝ ակրիլաթթուն, դրա նատրիումական աղը, ակրիլամիդը եւ 1,3-երկ(ակրիլամիդիլ)մեթիլիզոցիանուրատը ենթարկվում են համապոլիմերացման ջրային միջավայրում տաքացման պայմաններում ամոնիումի պերսուլֆատի եւ ամոնիումի քլորիդի առկայությամբ: Պրոցեսը կատարում են ակրիլաթթու : ակրիլաթթվի նատրիումական աղ : ակրիլամիդ : 1,3-երկ(ակրիլամիդիլ)մեթիլիզոցիանուրատ = (21,6-22,8) : (0,36-1,41) : (4,26-6,05) : (1,11-1,48) զանգվածային հարաբերակցությամբ: Ջրակլանող բաղադրանյութը ներառում է (զանգվ.%)

համապոլիմեր՝ 0,83-1,25, կավահող՝ 11,25-15,83 եւ ջուր՝ 83,33-87,50:

Պարզեցվում է համապոլիմերի ստացման եղանակը եւ բարելավվում են բաղադրանյութի ջրակլանող եւ ջրապահող հատկությունները:

(51) 7 C12G 1/00 (11) 1511 (13) A2
C12R 1:865
(21) P20030152 (22) 15.12.2003
(42) 11.02.2004
(71) «Հայաստանի ունիկալ գինիներ» ՓԲԸ (AM)
(72) Գարուշ Սամվելյան (AM), Կարեն Խաչատրյան (AM)
(73) «Հայաստանի ունիկալ գինիներ» ՓԲԸ, Երեւան, Նոր Նորքի 8-րդ միկրոշրջան 35, բն. 75 (AM)
(54) Խմորասնկերի *Saccharomyces oviformis* var *cheresiensis* N4 Արտաշատ - 1 շտամ, որն օգտագործվում է բնական կիսաանապակ կամ կիսաքաղցր կամ քաղցր գինիների ստացման
(57) Առաջարկվում է խմորասնկերի նոր *Saccharomyces oviformis* var *cheresiensis* N4 Արտաշատ - 1 շտամ, որն օգտագործվում է բնական կիսաանապակ կամ կիսաքաղցր կամ քաղցր գինիների ստացման համար:
Ապահովվում է խաղողի քաղցուի ազոտային նյութերի յուրացման բարձր աստիճանը:

(51) 7 C13K 11/00 (11) 1512 (13) A2
(21) P20030154 (22) 16.12.2003
(42) 11.02.2004
(71) Աշոտ Միրզոյան (AM)
(72) Գեւորգ Հայրապետյան (AM), Աշոտ Միրզոյան (AM), Էդուարդ Գաբրիելյան (AM)
(73) Աշոտ Միրզոյան, Երեւան, Կոմիտասի 48ա, բն. 85 (AM)
(54) Գետնախնձորից բյուրեղային ֆրուկտոզի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ ինուլին պարու-

նակող հումքից բյուրեղային ֆրոկտոզի ստացման եղանակներին:

Գետնախնձորի պալարները մանրացնում են, մզում, հիդրոլիզում ստացված հյութում պարունակվող ինուլինը ինուլինազ ֆերմենտի ազդեցությամբ 60-80°C ջերմաստիճանում 6-10 ժամվա ընթացքում, մշակում հիդրոլիզատը կալցիումի հիդրօքսիդի 10%-անոց լուծույթով 50°C ջերմաստիճանում, անջատում ստացված կալցիումի ֆրոկտոզատի լուծույթը, ապա այն պղպշակավորում ածխաթթու գազով, վակուումում գտնվող առաջացած կալցիումի կարբոնատը, որից հետո գլյուկոզաֆրոկտոզային լուծույթը պարզեցնում են, տաքացնում 80°C ջերմաստիճանում 1 ժամվա ընթացքում, կրկին գտնվում, մշակում նատրիումի հիդրօքսիդի 40%-անոց լուծույթով 50-70°C ջերմաստիճանում 6-10 ժամվա ընթացքում, ստացված ֆրոկտոզի լուծույթը եռաթանձրացնում են վակուումում մինչև օշարակի թանձրությունը եւ բյուրեղացնում օշարակը փոշիացմամբ:

Պարզեցվում է եղանակը:

(51) 7 E04C 1/00 (11) 1513 (13) A2
E04B 2/06

(21) P20030135 (22) 03.11.2003
(42) 13.01.2004

(71) Գեւորգ Թամարյան (AM)

(72) Գեւորգ Թամարյան (AM)

(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մուղովական 30/3, բն. 17 (AM)

(54) Շինաքար

(57) Շինաքարը իրենից ներկայացնում է ուղղանկյուն զուգահեռանիստ եւ ունի ամրանների տեղադրման երկու ուղղաձիգ միջանցիկ սիմետրիկ անցքեր: Դրանցից յուրաքանչյուրը գտնվում է շինաքարի ճակատային միստերից հավասար, իսկ կողային միստերից՝ շինաքարի երկարության 1/4 հեռավորության վրա:

Ապահովվում է ամրանավորման հուսալիությունը, 6 նկ.:

(51) 7 E04F 13/08 (11) 1514 (13) A2
E04B 1/61

(21) P20030137 (22) 07.11.2003

(42) 13.01.2004

(71) Գեւորգ Թամարյան (AM), Գեղամ Թամարյան (AM)

(72) Գեւորգ Թամարյան (AM), Գեղամ Թամարյան (AM)

(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մուղովական 30/3, բն. 17 (AM), Գեղամ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մուղովական 30/3, բն. 17 (AM)

(54) Երեսպատման սալիկների ամրակցման սարք

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ երեսպատման սալիկների ամրակցման սարքերին:

Սարքն ունի երեսպատման սալիկների հետ փոխազդեցության մեջ մտնող հանգույց եւ պտուտակային գամաձողերով ամրացված է պատին, դրա մեջ տեղակայված որմնակապային խցաբութակների օգնությամբ: Երեսպատման սալիկների հետ փոխազդեցության մեջ մտնող հանգույցն իրենից ներկայացնում է շերտաձող, որն իր ամբողջ երկարությամբ ունի սալիկները պահող տավրածեւ ելուստ: Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 4 նկ.:

(51) 7 E04F 13/08 (11) 1515 (13) A2
E04B 1/61

(21) P20030138 (22) 07.11.2003

(42) 11.02.2004

(71) Գեւորգ Թամարյան (AM)

(72) Գեւորգ Թամարյան (AM)

(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մուղովական 30/3, բն. 17 (AM)

(54) Երեսպատման սալիկների ամրացման սարք

(57) Սարքն ունի ուղղանկյուն վանդակներից կազմված շերտաձողային հիմնակմաղք, սալիկները պահող ելուստներ ունեցող կառչաններ եւ պտուտակային գամաձողերով ամրացված է պատին, դրա մեջ տեղակայված որմնակապային

խցաբութակների օգնությամբ, ընդ որում կառչանները տեղադրված են շերտաձողերի առանցքների հատման տեղերում, իսկ դրանց ելուստները տավրածել են եւ պատրաստված են ճկուն նյութից:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 4 նկ. .:

(51) 7 F02M 3/04 (11) 1516 (13) A2
F02D 33/00

(21) P20030144 (22) 28.11.2003

(42) 11.02.2004

(71) Գազիկ Երիցյան (AM)

(72) Գազիկ Երիցյան (AM)

(73) Գազիկ Երիցյան, Երեւան, Ա. Բաբաջանյանի 93, բն. 20 (AM)

(54) Կարբյուրատորային շարժիչի վառելիքի մատուցումը դադարեցնող հարմարանք

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ հարկադրական պարապ ընթացքի ժամանակ կարբյուրատորային շարժիչի վառելիքի մատուցման, կարգավորման եւ դադարեցման հարմարանքներին:

Կարբյուրատորային շարժիչի վառելիքի մատուցումը դադարեցնող հարմարանքն ունի փակող տարր, որը իրականացված է էլեկտրամագնիսի տեսքով: Էլեկտրամագնիսի խարիսխ է ծառայում շարժիչի վառելիքի մղիչի շարժական լծակը: Հարմարանքը լրացուցիչ ունի երկրորդ էլեկտրամագնիս եւ մխոցագլան, ընդ որում երկրորդ էլեկտրամագնիսի խարիսխ է ծառայում զսպանակված մխոցակոթը, մխոցագլանը խողովակով միակցված է կարբյուրատորին, իսկ երկու էլեկտրամագնիսների գործարկման բանալին միեւնույնն է:

Ապահովվում է վառելիքի խնայողություն, 1 նկ.:

(51) 7 F25J 1/00 (11) 1517 (13) A2

(21) P20030098 (22) 06.08.2003

(42) 11.12.2003

(71) Հաննիբալ Հարությունյան (AM), Արմեն Հարությունյան (AM), Վեներա Թանայան (AM)

(72) Հաննիբալ Հարությունյան (AM), Ժորա Մանուկյան (AM), Արմեն Հարությունյան (AM), Վեներա Թանայան (AM), Գեորգ Մանուկյան (AM), Արա Մանուկյան (AM)

(73) Հաննիբալ Հարությունյան, Երեւան, Արաբկիրի 39 փող. 2, բն. 3 (AM), Արմեն Հարությունյան, Երեւան, Արաբկիրի 39 փող. 2, բն. 3 (AM), Վեներա Թանայան, Երեւան, Արաբկիրի 39 փող. 2, բն. 3 (AM)

(54) Գազի հեղուկացման եղանակ եւ դրա իրականացման կայանք

(57) Գյուտը վերաբերում է գազի հեղուկացման եղանակներին եւ կայանքներին:

Գյուտի համաձայն գազը կենտրոնախույս խցիկում ենթարկում են մթնոլորտային ճնշումը գերազանցող կենտրոնախույս ուժի ազդեցության, խցիկի պտտման առանցքի միջակայքում նախավակուումային մոսրացում առաջացնալուց հետո կենտրոնախույս ուժը նվազեցնում են մինչեւ խցիկի մուտքում ուժի հակաճնշումը փոքր լինի խցիկ ներխուժող գազի ճնշումից եւ միաժամանակ կիրառում են հարկադրական վակուումացում եւ պտտման առանցքի միջակայքում առաջացած հեղուկ գազի հարկադրական հեռացում: Խցիկ ներխուժած գազը սառեցնում են ռեկուպերատիվ ջերմափոխանակությամբ, ապա ստացված հեղուկ գազը ջերմափոխանակության մեջ են դնում խցիկ ներխուժող գազի հոսքերի հետ:

Գազի հեղուկացման կայանքն ունի փականներով ներթողման անցքեր եւ պտտման հնարավորություն ունեցող թմբկածել պատյանի մեջ տեղակայված կենտրոնախույս խցիկ, որը բաղկացած է երկու սկավառակից եւ շառավղային թիակներից: Կայանքն ունի խցիկի արտաքին պարագծով տեղակայված ռեկուպերատիվ ջերմափոխանակիչ:

Բարձրացվում է արտադրողականությունը, 2 անկախ կետ, 4 նկ.:

(51) 7 F26B 3/06 (11) 1518 (13) A2

A24B 9/00

G05D 22/00

(21) P20030142 (22) 24.11.2003

(42) 11.02.2004

(71) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռուբեն Շխիկյան (AM)

(72) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռուբեն Շխիկյան (AM)

(73) Կարեն Ալեքսանդրյան, Երեւան, Տերյան 59, բն. 20 (AM), Ռուբեն Շխիկյան, Երեւան, Մոսկովյան 31, բն. 121 (AM)

(54) Բուսական հումքի չորացման գործընթացի ավտոմատ կառավարման եղանակ

(57) Բուսական հումքի չորացման գործընթացի ավտոմատ կառավարման եղանակում ջերմակրի պարամետրերի փոփոխմամբ, որպես փոփոխվող պարամետրեր օգտագործում են ջերմակրի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության եւ մատուցման արագության արժեքները, հաստատում են դրանց եւ չորացման ենթակա զանգվածի կշռի սկզբնական արժեքները: Ջանգվածի չորացման գործընթացի ընթացքում մինչեւ գործընթացի ավարտը անընդհատ չափում են զանգվածի կշիռը, համեմատում են սկզբնական կշռի հետ եւ ստացված տվյալների հիման վրա չորացման գործընթացի յուրաքանչյուր պահի համար ճշգրտում ջերմակրի ջերմաստիճանի, խոնավության եւ մատուցման արագության անհրաժեշտ արժեքները:

Բարձրացվում է չորացման որակը, խնայվում են էներգառեսուրսները, 1 նկ:

(51) 7 G01N 21/00 (11) 1519 (13) A2

(21) P20030085 (22) 04.07.2003

(42) 11.03.2004

(71) Գագիկ Շմավոնյան (AM)

(72) Գագիկ Շմավոնյան (AM)

(73) Գագիկ Շմավոնյան, Երեւան, Փարպեցու 9ա, բն. 4 (AM)

(54) Քվանտային կառուցվածքի կիսահաղորդչային նյութերի բեկման ցուցիչների որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է պինդ մարմնի ֆիզիկային, մասնավորապես՝ կիսահաղորդչային

նյութերի հիմնական բնութագրերի որոշմանը:

Ըստ եղանակի գրանցում են քվանտային կառուցվածքից արձակված ճառագայթի ցրման կորը տարբեր անկյունների տակ: Ցրման կորը ենթարկում են Ֆուրյե ձեւափոխության, այնուհետեւ համեմատում են տվյալ քվանտային կառուցվածքի համար հաշվարկային ցրման կորի հետ: Փորձնական եւ հաշվարկային ցրման կորերը համեմատելու համար հաշվարկային ծրագրում հաջորդական քայլերով փոփոխում են քվանտային կառուցվածքը կազմող կիսահաղորդչային նյութերի բեկման ցուցիչների արժեքները մինչեւ հաշվարկային եւ փորձնական ցրման կորերի համընկումը, որոնց համապատասխանող բեկման ցուցիչները հանդիսանում են քվանտային կառուցվածքի խառնուրդային կիսահաղորդչային նյութերի բեկման ցուցիչները:

Բարձրացվում է բեկման ցուցիչների չափման ճշտությունը, 4նկ. :

(51) 7 G01N 33/48 (11) 1520 (13) A2

(21) P20030133 (22) 31.10.2003

(42) 13.01.2004

(71) Հովհաննես Նաղաշյան (AM), Բախշիկ Ղազարյան (AM)

(72) Հովհաննես Նաղաշյան (AM), Բախշիկ Ղազարյան (AM)

(73) Հովհաննես Նաղաշյան, Երեւան, Սարյան 33, բն. 34 (AM), Բախշիկ Ղազարյան, Արագածոտնի մարզ, գ. Լեռնապար (AM)

(54) Կովերի մոտ նեոասկարիդոզի հարուցիչների թրթուրների հայտնաբերման եղանակ

(57) Նոր ծնած կովի կաթի 1-2 կաթիլը տեղադրում են առարկայական ապակու վրա, ավելացնում մեթիլեն կապույտի 0.05-0.1% ջրային լուծույթը եւ հետազոտում մանրադիտակով:

Ապահովվում է նոր ծնած կովի կաթում նեոասկարիդոզի թրթուրների արդյունավետ եւ վաղ հայտնաբերումը, ինչը թույլ է տալիս կանխել հորթերի հիվանդացումը:

(51) 7 G05B 13/00 (11) 1521 (13) A2
G06F 15/36

(21) P20030145 (22) 01.12.2003
(42) 11.02.2004

(71) Էդուարդ Ստեփանյան (AM)
(72) Էդուարդ Ստեփանյան (AM)
(73) Էդուարդ Ստեփանյան, Երեւան, Տիգրան Մեծի 29ա, բն. 70 (AM)
(54) Բազմամուտքային համակարգերի օպտիմալ կառավարման պատահական փնտրման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է հաշվողական տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ բազմամուտքային համակարգերի օպտիմալ կառավարմանը եւ կարող է կիրառվել տարբեր ոլորտներում բարդ տեխնոլոգիական պրոցեսների օպտիմալացման համար: Բազմամուտքային համակարգերի օպտիմալ կառավարման պատահական փնտրման եղանակում համակարգի մուտքերում պատահական թվերի գեներատորից ստացված ազդանշաններին համապատասխան կատարում են պատահական փնտրման քայլեր: Ստացված ելքային տվյալները վերլուծում են, գնահատում օպտիմալացման ենթակա ելքային մեծության փոփոխման բացարձակ արժեքը եւ նշանը, եւ ըստ դրա որոշում մուտքային անհրաժեշտ արժեքները: Գյուտի համաձայն ելքային փոփոխության բացարձակ արժեքը համեմատում են նախորդ ընտրված K մեծության արժեքի հետ եւ դրա հիման վրա ձեւավորում հետագա գործողությունները: K մեծության արժեքը եղանակի իրագործման ընթացքում կարգավորում են:

Ապահովվում է ելքային օպտիմալ արժեքների մեծ ճշտություն, նվազեցվում է փնտրման պրոցեսի տեւողությունը, 2 նկ.:

(51) 7 H01B 13/06 (11) 1522 (13) A2
(21) P20030073 (22) 16.06.2003
(42) 11.12.2003

(71) «Հաննի-Արմին» ՍՊԸ (AM)
(72) Արմեն Հարությունյան (AM), Կառլեն Հովհան-

նիսյան (AM), Հաննիբալ Հարությունյան (AM), Վեներա Թանայան (AM), Գրիգոր Ամանյան (AM)
(73) «Հաննի-Արմին» ՍՊԸ, Երեւան, Արմենի 10/1 (AM)
(54) Կաբելային արտադրանքի պատրաստման եղանակ եւ դրա իրականացման կայանք
(57) Գյուտը վերաբերում է կաբելային տեխնիկային, մասնավորապես՝ ջերմառեակտիվ մեկուսիչով կաբելային արտադրանքի պատրաստմանը:

Կաբելային արտադրանքի պատրաստման եղանակում վուլկանացվող նյութի տաքացումը վուլկանացման զոնայում կատարում են միասնական տաքացված հեղուկ ջերմատարի շրջապատվող հոսքում եւ ջերմային ռեժիմի կայունության ապահովման համար այդ զոնաների խողովակաշարի կտրվածքով բաց են թողնում փոփոխական հոսանք: Սառեցումը կատարում են շրջապատվող ուղղաձիգ դիրքով սառը հեղուկ ջերմատարի հոսքում: Կաբելային կիսաֆաբրիկատի տեղափոխումը վուլկանացման զոնայից սառեցման զոնա կատարում են ստատիկ վիճակում գտնվող հեղուկ միջավայրի միջով: Վուլկանացման զոնայում ապահովում են ավելցուկային ճնշում ուղղաձիգ սառեցման խցիկում շրջապատվող հոսքով պայմանավորված սյան բարձրությամբ, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) 7 H01M 10/28 (11) 1523 (13) A2
H01M 10/44

(21) P20030112 (22) 01.10.2003
(42) 11.12.2003

(71) Սուրեն Մարտիրոսյան (AM), Նելլի Ավագյան (AM)
(72) Սուրեն Մարտիրոսյան (AM), Նելլի Ավագյան (AM)
(73) Սուրեն Մարտիրոսյան, Երեւան, Խանջյան 31, բն. 37 (AM), Նելլի Ավագյան, Սեւան, Խաղաղության 2, բն. 39 (AM)
(54) Ալկալիական կուտակիչ եւ նրա լիցքավորման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է հոսանքի քիմիական աղբյուրներին եւ կարող է կիրառվել ցինկե

բացասական էլեկտրոդով հոսանքի քիմիական աղբյուրներում, մասնավորապես՝ ցինկանիկելային եւ ցինկաարծաթային կուտակիչներում:

Կուտակիչն ունի դրական եւ ցինկե բացասական էլեկտրոդային զույգեր ու լրացուցիչ օժանդակ էլեկտրոդներ: Կուտակիչի էլեկտրոդները լիցքավորում են հերթականորեն:

Դրական եւ բացասական էլեկտրոդներից յուրաքանչյուրի լիցքավորումը կատարում են տարբեր ֆազերում նրան կից օժանդակ էլեկտրոդի միջոցով, 2 անկախ կետ, 4 նկ.:

ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՄԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
U օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A61B 17/58 (11) 75 (13) Ս
(21) U20040098 (22) 02.08.2004
(71) Արմենակ Ռաֆայելյան (AM)
(72) Արմենակ Ռաֆայելյան (AM)
(73) Արմենակ Ռաֆայելյան, Երեւան, Աղայան 9,
բն. 29 (AM)
(54) Ազդոսկրի վզիկի օստեոսինթեզի սեւեռիչ
(57) Օգտակար մոդելը վերաբերում է բժշկական
տեխնիկային, մասնավորապես՝ վիրաբուժությա-
նը, եւ կարող է կիրառվել վնասվածքաբուժության
մեջ կոտրվածքների բուժման համար:

Ազդոսկրի վզիկի օստեոսինթեզի սեւեռիչը
մետաղյա ձող է, որի մի ծայրը սրված է եւ ունի
խոշոր քայլով պարուրակ: Դրա մյուս ծայրն ունի
երկայնական նիստ եւ մետրական պարուրակ՝
երկու մանեկով:

Պարուրակների տրամագծերը մեծ են ձողի
տրամագծից: Փակ օստեոսինթեզի կատարման
ժամանակ ապահովվում է հուսալի կոմպրեսիա
ոսկրաբեկորների միջեւ ինչպես վիրահատման
ժամանակ, այնպես էլ հետվիրահատական
շրջանում, 2 նկ.:


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	<i>S</i> արդյունաբերական նմուշի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
57	էական հատկանիշների ամբողջությունը
71	հայտատուն(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 8 14-02 (11) 82 (13) S
 (21) D200300009 (22) 12.11.03
 (31) D2003-018786 (32) 27.05.2003 (33) JP
 (71) Սոնի Քնիյուր Էնթրթեյնմենթ Ինք. (JP)
 (72) Մասակագու Կանատանի (JP), Յիրոսի Յա-սուտոմի (JP)
 (73) Սոնի Քնիյուր Էնթրթեյնմենթ Ինք. (JP)
 (74) Յ. Դավթյան
 (54) Կառավարման թվաբանական բլոկ
 (55)



(57) Կառավարման թվաբանական բլոկ, որը բնութագրվում է՝

իրանից, կափարիչից եւ կողմնային պանելներից բաղկացած հորինվածքային տարրերի կազմով.

իրանով, որը ձեւակազմավորված է որպես հորիզոնական կողմնորոշմամբ ուղղանկյուն զուգահեռանիստ.


